

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 02**  
վիճակագրության պետական խորհրդի նիստի

09.02.2010թ.

ժ.11: 00

**Մասնակցում էին՝**

Ս.Մնացականյան (*խորհրդի նախագահ*), Գ.Անանյան, Գ.Գևորգյան, ՅՈՒ.Պողոսյան, Ա.Շաբոյան, Ս.Դավթյան, Ա.Աղազարյան (*խորհրդի անդամներ*)

Հ. Գրիգորյան (*խորհրդի քարտուղար*)

Հրավիրված էին՝ Լ.Միրզոյան (ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ), Ջ.Միրզոյան (ՀՀ ԱՎԾ նախագահի խորհրդական), Ս. Պողոսյան (*իրավաբանական բաժնի պետ*), Լ. Պետրոսյան (վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ), Գ.Մարտիրոսովա (*տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ*):

**Օրակարգի նախագծում՝ երկու հարց.**

1. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ 2009 թվականի երրորդ եռամսյակին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության անվանագերծված տվյալների բազան Համաշխարհային բանկի Երևանի գրասենյակին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

*/Ձեկուցող՝ Գ. Մարտիրոսովա/*

**2. Այլ հարցեր**

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի նախագահի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:

*/Զվեարկության արդյունքները-կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

**Լսեցին՝**

1. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ 2009 թվականի երրորդ եռամսյակին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության անվանագերծված տվյալների բազան Համաշխարհային բանկի Երևանի գրասենյակին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

*/Ձեկուցող՝ Գ. Մարտիրոսովա/*

**Որոշեցին՝**

թույլատրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնին՝ Համաշխարհային բանկի Երևանի գրասենյակին տրամադրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 2009 թվականի երրորդ եռամսյակին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանագերծված տվյալների բազան՝ զուտ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չիրապարակելու և այլ կարգով չտարածելու պայմաններով:

*/Անհատական/*

*/Զվեարկության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ